

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ հրավիրելու մասին

11 մարտի, 2019թ.

ք. Սպիտակ

«Քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ավագ քննիչ, առաջին դասի խորհրդական Ա.Եղիազարյանս ուսումնասիրելով վարույթիս 52104015 քրեական գործի նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

2015 թվականի նոյեմբերի 17-ին Վանաձոր քաղաքի բնակիչ Ռոբերտ Գագիկի Գրիգորյանի տված գրավոր հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով տվյալներ են ձեռք բերվել, որ նույն օրը, ժամը 01³⁰-ի սահմաններում Լոռու մարզի Նոր Խաչակապ գյուղի վարչական տարածքում գտնվող «Ռոսիա» ռեստորանային համալիրում գործող գիշերային կարբե շուռ-ակումբում տեղի ունեցած վիճաբանության ընթացքում, Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Կարեն Հովհաննեսի Բաղայանը բռունցքով մեկ անգամ հարվածել է Ռոբերտ Գրիգորյանի դեմքին՝ պատճառելով կյանքին վտանգ սպառնացող՝ առողջության ծանր վնաս:

Դեպքի առթիվ 2015 թվականի նոյեմբերի 23-ին Սպիտակի քննչական բաժնում «Քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 52104015 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:

2015 թվականի դեկտեմբերի 8-ին որոշում է կայացվել Կարեն Բաղայանին «Քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին, նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում և որպես խափանման միջոց կիրառվել կալանավորում:

2016 թվականի հունվարի 23-ին քրեական գործով վարույթը կասեցվել է՝ մեղադրյալի գտնվելու վայրը պարզված չլինելու հիմքով:

Պարզվել է, որ Կարեն Բաղայանը ՌԴ քրեական օրենսգրքի 111-րդ հոդվածի 3-րդ մասով գտնվել է հետախուզման մեջ և 2018 թվականի մարտի 3-ին հայտնաբերվել էր Ռուսաստանի Դաշնության իրավապահ մարմինների կողմից և ձերբակալվել:

2018 թվականի սեպտեմբերի 5-ին քրեական գործով կասեցված վարույթը վերսկսվել է:

2018 թվականի սեպտեմբերի 7-ին թիվ 52104015 քրեական գործն ուղարկվել է «Քննչական կոմիտե՝ ռուսերեն թարգմանելու նպատակով:

Քրեական գործի թարգմանությունը կատարելու է Պոլիգլոտներ ՍՊ ընկերության թարգմանիչ Գագիկ Ավետիքի Շիրմազանյանի հետ՝ նշված քրեական գործի թարգմանությունը կատարելու համար, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել Գագիկ Ավետիքի Շիրմազանյանին:

2. Թարգմանիչ Գագիկ Շիրմազանյանին պարզաբանել նրա իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քր. օր.-ի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության վերաբերյալ, որի մասին նրան հայտնել ստորագրությամբ:

Ավագ քննիչ՝



Ա.Եղիազարյան

Սույն որոշումն ինձ հայտնվել է « » _____ 201 թ.: Ես նախազգուշացված եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները:

Թարգմանիչ՝



Գագիկ Շիրմազանյան

Որոշումը հայտնեց, իրավունքներն ու պարտականությունները պարզաբանեց և պատասխանատվության մասին նախազգուշացրեց՝

Ավագ քննիչ՝



Ա.Եղիազարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թարգմանիչ ներգրավելու մասին

ք. Երևան

27 մարտի 2019թ.

ՀՀ քննչական կոմիտեի միջազգային հարցումների ապահովման բաժնի ՀԿԳ քննիչ, երկրորդ դասի խորհրդական Դ.Ս.Թադևոսյանս, ուսումնասիրելով վարույթումս քննվող թիվ 69102019 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

ՀՀ քննչական կոմիտեում ստացվել է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի գրությունը՝ կից ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով ՀՀ-ում ԳԴՀ դեսպանությունից ստացված թիվ 10 JS 11578/17 քրեական գործի և փաստաթղթերի փաթեթի օտարալեզու նյութերով՝ հարուցված ԳԴՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասի, 243-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության 3-րդ կետի, 244-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 244ա հոդվածի, 22-րդ և 23-րդ հոդվածների հատկանիշներով (հանցավոր խմբով ծանր կողոպուտի փորձ)՝ Արման և Գագիկ Սարգսյանների վերաբերյալ:

2019 թվականի մարտի 20-ին քրեական գործը և փաստաթղթերի փաթեթը ստացվել են ՀՀ քննչական կոմիտեի միջազգային հարցումների ապահովման բաժնում, որին շնորհվել է 69102019 հերթական համարը և ընդունվել է վարույթ:

Նկատի ունենալով, որ քրեական գործի նյութերի մի մասը գերմաներեն լեզվով է, իսկ դրանց թարգմանության համար անհրաժեշտ են հատուկ գիտելիքներ, ուստի ղեկավարվելով, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել <<Պոլիգլոտներ>> ՍՊ ընկերության գերմաներեն լեզվի թարգմանիչ Անահիտ Սուրենի Սարգսյանին (ծնված՝ 19.09.1971թ., գերմաներեն լեզվի թարգմանչի որակավորմամբ, հայ, ՀՀ քաղաքացու՝ AN սերիայի թիվ 0290714 անձնագիր):

2. Թարգմանիչ Ա.Սարգսյանին ծանոթացնել և պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին, ինչպես նաև առանց քննիչի թույլտվության նախաքննության տվյալները հրապարակելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀԿԳ քննիչ



Դ.Թադևոսյան

Որոշմանը ծանոթացել եմ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները պարզաբանվել են, նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով, և առանց քննիչի թույլտվության նախաքննության տվյալները հրապարակելու համար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ *Ն. Ասրգսյան*
Քեթ

Ա.Ասրգսյան

<< >> _____ 2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ ներգրավելու մասին

«03» ապրիլի 2019թ.

ք. Արմավյան

ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Արմավյանի քննչական բաժնի քննիչ Հ.Վարդանյանս, վերանայելով թիվ 58158317 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2017 թվականի հուլիսի 3-ին ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում Սարգիս Սարգսյանը հաղորդում է տվել այն մասին, որ սույն թվականի հուլիսի 3-ին 03:30-ի սահմաններում «ok.ru» սոցիալական ցանցի անհայտ օգտատիրոջ հետ շփման ընթացքում վերջինիս առաջարկով տեսազանգի միջոցով կատարել են վիրտուալ սեռական գործողություններ, որից հետո նշված օգտատերն իրեն է ուղարկել այդ գործողությունների տեսագրությունը և այն այլ օգտատերերին չհրապարակելու դիմաց պահանջել է «QiWi» էլեկտրական վճարային համակարգի միջոցով փոխանցել 200 ԱՄՆ դոլար գումար:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Սարգիս Սարգսյանը տրված բացատրությամբ պնդել է վերոգրյալը և հավաստել, որ գումարը պահանջող անձն իր հետ հաղորդակցվել է «ok.ru» սոցիալական ցանցի մի քանի անհատական էջերի միջոցով, սակայն իրեն հաջողվել է պահպանել միայն «sargis sargis» և «ՈՐԱՅԴԱ Խ ԵՕԼԵԿՕ» անվանումներով անհատական էջերի նույնականացման համարները:

Դեպքի առթիվ 06.07.2017թ. ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 58158317 քրեական գործը և նույն օրը որոշում է կայացվել թիվ 58158317 քրեական գործը ՀՀ ՔԿ Արմավյանի քննչական բաժնի ուղարկելու մասին:

14.07.2017թ. սույն քրեական գործը ստացվել է Արմավյանի քննչական բաժնում, որի նախաքննություն հետագա կատարումը հանձնարարվել է ինձ:

Նախաքննության ընթացքում Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությանից ֆրանսերեն լեզվով ստացվել են հարցման պատասխաններ:

Նկատի ունենալով, որ անհարաժեշտություն է առաջացել Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությանից ստացված հարցման պատասխանները ֆրանսերեն լեզվից թարգմանել հայերեն, որի համար անհրաժեշտ է գործին թարգմանիչ ներգրավել, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն քրեական գործով թարգմանիչ ներգրավել «Պոլիգլոտներ» ՍՊԸ-ի թարգմանիչ Աննա Միքելյանին, ով հավասարապես տիրապետում է հայերեն և ֆրանսերեն լեզուներին:

2. Թարգմանին ծանոթացնել և պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՔՆՆԻՉ

Հ.Վարդանյան

Որոշմանը ծանոթացել եմ, իմ իրավունքներն ու պարտականությունները բացատրվել են, նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգման՝


(ստորագրությունը ազգանունը)

«03» 04 2019թ.

ՈՐՈՇՈՒՄ
Թարգմանիչ հրավիրելու մասին

27 մարտի 2019թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության կոռուպցիոն, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների և կիրեռհանցագործությունների քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ Շ.Ղազարյանս , վերանայելով վարույթում քննվող թիվ 58151417 քրեակա գործի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

Անհայտ անձը, գտնելով անչափահաս Անահիտ Վարսանյանի կողմից 2017թ. հունվարի 26 -ին կորցրած «Apple ipad 3 mi ni» պլանշետային համակարգիչը, դրա «Apple ID» գաղտնաբառին տիրանալու շահադիտական նպատակով 2017թ. փետրվարի 3 -ին Անահիտ Վարսանյանի հոր՝ Վահե Վարսանյանի 091 -20-79-68 հեռախոսահամարին +995571148003 և +995599914421 հեռախոսահամարներից ուղարկել է գաղտնաբառի ապօրինի պատճենահանման համար նախատեսված՝ «<http://devicesfinder.com/iphone/>» վնասաբեր ծրագրի հղումը:

Դեպքի առթիվ 2017թ. փետրվարի 8 -ին ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 256 -րդ հոդվածի 2 մասի 1 -ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 58151417 քրեակա գործը և նախաքննությունը կատարելու համար ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչություն:

Նախաքննության ընթացքում քրեական գործով իրավական օգնություն ցուցաբերելու մասին հարցում է ուղարկվել Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն և ստացվել են ֆրանսերեն լեզվով փաստաթղթեր , որոնք ենթակա են թարգմանության հայերեն լեզվով:

Նկատի ունենալով, որ «Պոլիգլոտներ» ՍՊԸ ընկերության թարգմանիչ Աննա Միքայելյանն ունի ֆրանսերեն լեզվով թարգմանիչ որակավորում չի հանդիսանում քրեական գործով շահագրգռված ան ձ , ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83 -րդ հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ

Թիվ 58151417 քրեական գործով որպես ֆրանսերեն լեզվի թարգմանիչ հրավիրել «Պոլիգլոտներ» ՍՊԸ ընկերության թարգմանիչ Աննա Միքայելյանին /ՀՀ ԱՆ տեղ եկանք, տրված՝ 25.12.2018 թ./, նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83 -րդ հոդվածով նախատեսված թարգմանիչ իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338 -րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀԿԳ ավագ քննիչ՝

Շ.Ղազարյան

Ճանութացա սույն որոշմանը: Ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83 -րդ հոդվածով նախատեսված թարգմանիչ իրավունքներն ու պարտականությունները , միաժամանակ նախազգուշացվել են ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու և դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 338 -րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝

Ա.Միքայելյան

ՈՐՈՇՈՒՄ
թարգմանիչ հրավիրելու մասին

ք.Երևան

27.03.2019թ.

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանի քննչական բաժնի ՀԿԳ քննիչ՝ Ռ.Նազարյանս, վերանայելով թիվ 13162119 քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

2019թ. հունվարի 18-ին Մարտին Հակոբի Թորոսյանը «Նուտիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժին հաղորդում է տվել այն մասին, որ 2018թ. դեկտեմբերի 24-ին Երևան քաղաքի Ամիրյան 23/1 հասցեում գործող «Հայէկոնոմբանկ» ՓԲԸ-ի միջոցով 1.625 ԱՄՆ դոլար գումար է փոխանցել չինական «Նաթոնգ Դիագնոս Բիոթեքնոլոջի» («Nantong Diagnos Biotechnology Co., LTD») կազմակերպության (այսուհետ՝ Չինական ընկերություն) 3308021420100012666 հաշվեհամարին՝ բժշկական սարքավորումների մատակարարման համար, սակայն ընկերությունը խաբեության և վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակել է նշված գումարը, պատճառաբանելով, որ փոխանցման ընթացքում էլեկտրոնային փոստի ծառայության միջոցով հաքերները հափշտակել են գումարը:

Դեպքի առթիվ 21.01.2019թ. «Նուտիկանության Կենտրոնական բաժնում «Քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 13162119 քրեական գործը, որը նախաքննություն կատարելու համար 24.01.2019թ. ուղարկվել է քննչական բաժին և ընդունվել վարույթ:

Քրեական գործի նախաքննությամբ տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ «Նաթոնգ Դիագնոս Բիոթեքնոլոջի» կազմակերպությունը գործում է Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում՝ Building 1, High & New Technology Business Park, Rugao, Jiangsu, China հասցեով (նախաքննությամբ այլ տվյալներ ձեռք չեն բերվել), իսկ հաշիվ-ապրանքագրում որպես շահառու (Beneficiary) նշված է եղել «DEXIANG YIWU IMPORT AND EXPORT CO, LTD»:

Հաշվի առնելով, որ քրեական գործի հանգամանքների բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ հետազոտումն ապահովելու նպատակով, անհրաժեշտություն է առաջացել դատավարական գործողություններ կատարել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության տարածքում, 13.03.2019թ. Չինաստանի Ժողովրդական Հանրապետության իրավասու մարմին, «Քննչական կոմիտեի միջազգային հարցումների ապահովման բաժնի միջոցով ուղարկվել է իրավական օգնություն ցույց տալու մասին համապատասխան միջնորդություն, որը հայերեն լեզվից չիներեն թարգմանելու համար անհրաժեշտ է սույն քրեական գործի նախաքննության ընթացքում ներգրավել չիներեն լեզվի թարգմանիչ:

ՈՐՈՇՈՒՄ
Թարգմանիչ հրավիրելու մասին

04 ապրիլի 2019թ.

ք.Երևան

«Վազ 21214» մակնիշի 831 LL 01 հաշվառման համալսարանի ավտոմեքենան հրկիզելու և համակարգչային տեղեկատվությունն ու ծրագրերը ոչնչացնելու փորձ կատարելու առերևույթ դեպքերի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 34-253-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված թիվ 41151119 քրեական գործը:

ՊԱՐԶԵՑԻ՝

«Վազ 21214» մակնիշի 831 LL 01 հաշվառման համալսարանի ավտոմեքենան հրկիզելու և համակարգչային տեղեկատվությունն ու ծրագրերը ոչնչացնելու փորձ կատարելու առերևույթ դեպքերի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 34-253-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված թիվ 41151119 քրեական գործը:

Նախաքննության ընթացքում կազմվել է Շվեյցարիայի Համադաշնության իրավասու մարմնին ուղղված իրավական օգնություն ցուցաբերելու մասին հարցում, որը ենթակա է թարգմանության ֆրանսերեն լեզվով:

Նկատի ունենալով, որ «Պոլիգլոտներ» ՍՊԸ ընկերության թարգմանիչ Աննա Միքայելյանն ունի ֆրանսերեն լեզվով թարգմանչի որակավորում և չի հանդիսանում քրեական գործով շահագրգռված անձ, ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով:

ՈՐՈՇԵՑԻ

Թիվ 41151119 քրեական գործով որպես ֆրանսերեն լեզվի թարգմանիչ հրավիրել «Պոլիգլոտներ» ՍՊԸ ընկերության թարգմանիչ Աննա Միքայելյանին /ՀՀ ԱՆ տեղեկանք, տրված՝ 25.12.2018թ./, նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

«ՎԿ» ավագ քննիչ՝



Շ.Նալչարյան

Ծանոթացա սույն որոշմանը: Ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝



Ա.Միքայելյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ ներգրավելու մասին

01 ապրիլի 2019թ.

ք. Երևան

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ, Հ.Ս.Հովսեփյանս վերանայելով վարույթումս քննվող թիվ 14878317 քրեական գործի նյութերը.
ՊԱՐԶԵՑԻ

«ՔԿ ԵՔԲՎ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում քննվող թիվ 14878318 քրեական գործով Իրանի իսլամական հանրապետությունից ստացված իրավական օգնություն ցույց տալու ամսին հարցման պատասխանը պարսկերեն լեզվից հայերեն լեզվով թարգմանելու նպատակով անրաժեշտ է ներգրավել պարսկերեն լեզվի թարգմանիչ:

Հաշվի առնելով, որ «Քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն՝ քրեական դատավարությունը տարվում է հայերեն լեզվով, իսկ «Պոլիգլոտներ» ՍՊԸ աշխատակից թարգմանիչ Կրիստինա Խանիկյանը ազատ տիրապետում է հայերեն և պարսկերեն լեզուներին, ուստի ղեկավարվելով «Քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Սույն քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Պոլիգլոտներ» ՍՊԸ աշխատակից թարգմանիչ՝ Կրիստինա Խանիկյանին:

2. Թարգմանիչ ~~Արթուր Թահմասյանին~~ ծանոթացնել և պարզաբանել «Քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար «Քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝

Հ.Ս.Հովսեփյան

Որոշմանը ծանոթացել եմ, իմ իրավունքներն ու պարտականությունները բացատրվել են, նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Կրիստինա Խանիկյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Քրեական գործով թարգմանիչ ներգրավելու մասին

10.04.2019թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Վ.Մ.Բավեյան, վերանայելով վարույթում քննվող թիվ 15872118 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Ջ Ե Ց Ի

2018 թվականի սեպտեմբերի 21-ին ժամը 23:47-ին Շողիկ Պետրոսի Քեչիշյան-Հեգարջախիբին ոստիկանության Կենտրոնական բաժնում հաղորդում է ավել այն մասին, որ նույն օրը ժամը 18:00-ից մինչև 20:00-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայից մինչև Հանրապետության հրապարակն ընկած հատվածում անհայտ անձը իր պայտուսակից գաղտնի հափշտակել է դրամապանակը, որի մեջ եղել են 485.200 ՀՀ դրամին համարժեք 1000 ԱՄՆ դոլար գումար 150.000 իրանական բուման, 50.000 ՀՀ դրամ և բանկային քարտ:

Դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում 2018 թվականի հոկտեմբերի 1-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 15872118 քրեական գործը և նախաքննություն կատարելու համար ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին:

Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել սույն քրեական գործով վարույթին ներգրավել <<Պոլիգլոտներ>> ՍՊԸ-ի թարգմանիչ Կրիստինա Խանիկյանին կատարվելիք քննչական և դատավարական գործողություններին մասնակցելու համար:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 15872118 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել <<Պոլիգլոտներ>> ՍՊԸ-ի թարգմանիչ Կրիստինա Խանիկյանին:
2. Կրիստինա Խանիկյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝

Վ.Մ.Բավեյան

Ծանոթացա թարգմանիչի իրավունքներին և պարտականություններին, նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

«  » Կ.Խանիկյան
2019թ.